ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔ

2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱԿԻՐՃ ՏԱՐԲԵՐԱԿ

Հաստատվել է Վեդի համայնքի ավագանու 16/01/2018**թ.-ի N** 2-**Ն որոշմամբ**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ի՞ՆՉ Է ԲՅՈՒՋԵՆ

Բյուջեն, լինելով համայնքի եկամուտների ձևավորման ու ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագիր, ուղղված է ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը:

Եթե ամենապարզ ձևով ներկայացնենք, բյուջեն ակնկալվող եկամուտների և առաջարկվող ծրագրերի ու միջոցառումների համապարփակ թվարկումն է գալիք ֆինանսական տարվա համար, ՏԻՄ-երի գործունեության յուրաքանչյուր բնագավառում: Լավագույն դեպքում, բյուջեն պոտենցիալ սպառողների միջև սահմանափակ միջոցների համապարփակ և հետևողական բաշխումն է: Որպես այդպիսին՝բյուջեն ՏԻՄ-երի գործունեության ֆինանսական կառավարման առանցքն է:

Սույն փաստաթղթի նպատակն է՝ ներկայացնել համայնքի բնակիչներին, թե ՏԻՄ-երն ինչպե՞ս են արձագանքում համայնքի բնակիչների բարեկեցության բարձրացմանը՝ տարաբնույթ ծառայությունների մատուցման և ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Համայնքի 2018թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Գալիք բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները և բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը:
- Բարձրացնել ՏԻ-ը բնակիչների ներգրավվածությունը՝ բնակիչների մասնակցության ձևերի ներդրման և զարգացման միջոցով,
- Բարձրացնել ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակը,
- Ապահովել համայնքի ջրային ռեսուրսների նպատակային և արդյունավետ կառավարումն ու օգտագործումը
- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, ջեռուցման համակարգերի վերականգնման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ:
- Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում:
- Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը:
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:

Համայնքի 2018թ. զարգացման հիմնական ուղղությունները ուղղված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը:

Ես դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանուն, համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2018 թվականի բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԻՆՉՊԻՍԻ՞Ն ԵՆՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ՏԵՍՆԵԼ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔՆ ԱՊԱԳԱՅՈՒՄ. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Վեդի համայնքը զարգացած գյուղատնտեսությամբ, մարզում հայտնի տարածաշրջանային կենտրոն է, բնակչության համար մատչելի և որակյալ հանրային ծառայությունների ապահովմամբ, բարեկարգ և մաքուր բնակավայր է:

ՈՐՏԵՂԻ՞Ց ԵՆ ԳՈՅԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Համայնքի 2018թ. բյուջեի կանխատեսվող մուտքերը → **333 762 հազար դրամ**



ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՓՈՓՈԽՎԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԸ 3 ՏԱՐՈՒՄ

հազար դրամ



ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՓՈՓՈԽՎԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 3 ՏԱՐՈՒՄ

հազար դրամ



Ի՞ՆՉ ՏԵՍԱԿԻ ԾԱԽՍԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

հազար դրամ



Ո՞Ր ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԵՆ ԾԱԽՍՎԵԼՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

հազար դրամ

Հ/հ	ՈԼՈՐՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ)	ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ (%)
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	333762,0	100
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	67309	20,2
2.	Պաշտպանություն	0	0,0
3.	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0	0,0
4.	Տնտեսական հարաբերություններ	-16310	-4,9
5.	Շրջակա միջավայրի պաշտպանություն	18850	5,6
6.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	74793	22,4
7.	Առողջապահություն	150	0,0
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն	25950	7,8
9.	Կրթություն	145000	43,4
10.	Սոցիալական պաշտպանություն	9000	2,7
11.	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	9020	2,7

ԻՆՉ ԸՆԹԱՑԻԿ ԾՐԱԳՐԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ

հազար դրամ

Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	
Ծրագիր	**Գումար**
Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, ենթակառուցվածքների պահպանում	56979,7
Տեղեկատվական ծրագրերի, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ հանրային ծառայությունների ձեռք բերում	5357,3
Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության մակարդակի բարձրացում	1300
Բաժին 4. Տնտեսական հարաբերություններ	
Ծրագիր	**Գումար**
Համայնքի գերեզմանատան տարածքի կանաչ տարածքների պահպանում	70
Հակակարկտային կայանների անխափան աշխատանքի ապահովում	200
Համայնքի տարածքում գործող ցայտաղբյուրների ջրի վարձավճար	400
Փողոցների գծանշում,երթևեկության նշանների տեղադրում	1120
Բաժին 5. Շրջակա միջավայրի պաշտպանություն	
Ծրագիր	**Գումար**
Համայնքի տարածքում աղբահանում, շրջակա միջավայրի պաշտպանություն	18850
Բաժին 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	
Ծրագիր	**Գումար**
Իրականացնել ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցի սպասարկման, մայթերի պահպանման և սանիտարական մաքրման, կոպճապատման, կանաչ գոտիների պահպանման աշխատանքներ	52039
Բաժին 7. Առողջապահություն	
Ծրագիր	**Գումար**
Աջակցություն համայնքի առաջնային բուժօգնության ծառայությանը	150
Բաժին 8. Հանգիստ, մշակույթ և կրոն	
Ծրագիր	**Գումար**
Համայնքի գրադարանի և մշակույթի տան պահպանում, համաքաղաքային միջոցառումների կազմակերպում:	21350
Համայնքի բնակիչների համար որակյալ մշակութային ծառայություններից օգտվելու հնարավորությունների ստեղծում	4600
Բաժին 9. Կրթություն	
Ծրագիր	**Գումար**
Համայնքի բնակչությանը նախադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցում	73500
Համայնքի բնակչությանը արտադպրոցական կրթության և դաստիարակության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցում	67400
Համայնքի կրթական այլ հաստատություններին, ուսանողներին և սովորողներին աջակցություն	2100

Ոլորտ 10. Սոցիալական պաշտպանություն	
Ծրագիր	**Գումար**
Սոցիալական ծառայությունների մատուցում և դրամական օգնությունների տրամադրում	9000
Բաժին 11. Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	
Ծրագիր	**Գումար**
Համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցների հաշվին իրականացվող ծրագրեր, մասնավորապես «Ջրային ռեսուրսների մասնակցային և արդյունավետ օգտագործում» ծրագրում համայնքի կողմից ներդրում:	9020

ԻՆՉ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼՈՒ

հազար դրամ

Ոլորտ 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	
Ծրագիր	**Գումար**
Համայնքի աշխատակազմի գործունեության աշխատանքային պայմանների բարելավում, անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերում	3672
Բաժին 4. Տնտեսական հարաբերություններ	
Ծրագիր	**Գումար**
Ներհամայնքային փողոցների ասֆալտապատում	1900
Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի, հողերի իրացում	-20000
Բաժին 6. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	
Ծրագիր	**Գումար**
Բազմաբնակարան շենքերի մուտքերի մետաղական դռների տեղադրում և փոսային նորոգումներ	22754
Բաժին 9. Կրթություն	
Ծրագիր	**Գումար**
Ֆուտբոլի դաշտի ցանկապատում	2000